Միաբանք Հայոց տարակուսեալէին 'ի վերայ այսր խընդրոյ, զի գիր Փոխանորդին իբր ստոյգ յաղերէ յուսադրէր զնոսա, գրեանք այլազգեաց յայլ ինն եղանակ շրջէին զբանն։ Զկնի երկար խորհելոյ յանձն առին, եւ գրեցին առ Փոխանորդն ցուցանել զգիր Դատաւորին 'ի պատշաճաւոր տեղիս և 'ի պահանջել հարկին հատուցանել զգումարն. չեւ եւս առեալ սոցա զպատասխանիս գրեանց, եհաս յԵրուսաղէմ Նուիրակապետն հրովարտակաւ Արքայի ('ի 18 Ցունիսի), յորում գրէր. Դատաւորն Երուսաղէմի Մուսայ Էֆէնտի, արտաքոյ կամաց եւ հաճութեան իմոյ գտեալ յանարժան գործս, և 'ի պատիժ նորին ազգարարութեամբ մեծի Դենպետին աքսորեսցի 'ի կղզին Ստանքիոյ. լուեալ զայս Դատաւորին պատրաստեցաւ 'ի չու, և առաքեաց զհաւատարիմ իւր 'ի ջանս Հայոց չհոգալ ինչ վասն իւր, զի գիտէր զպատճառ աքսորման իւրոյ որ էր Կուսակալն Դամասկոսի, զի ոչ կատարեաց զհրաման նորին, եւ ոչ գրեաց Իլամ որպէս պահանջէրն, որոյ վասն բարուրանս եղեալ ամբաստանեալ է զնա 'ի Դուռն, եւ Տէրութիւնն 'ի շնորհս նորին այնպէս արարեալ. ապա թէ ոչ պարտ էր բացայայտ գրել 'ի հրովարտակին զպատճառ աքսորմանն, որպէս նախորդի նորին։ Եւ թէ զկնի մեկնելոյ իւրոյ ունէր ահացուցանել Բդեշխն զՀայս, այլ չերկնչիլ երբէք 'ի նմանէ, զի ամենայն ինչ հրամանաւ Արքայի և գիտութեամբ մեծամեծաց եղեալ է. զի 'ի հասանիլ իմ 'ի տեղի աքսորանացս, ցուցից զամենայն ինչ Տէրութեան 'ի ձեռն մեծի Դենպետին և այլոց բարերարաց իմոց։ Սակայն Հայք միշտ առաջի աչաց ունէին զգիր Փոխանորդին, զթշնամութիւն Օսմանայ և Նուրեայ և այլոց եւ վարանէին 'ի միտս, զի 'ի հեռանալ սորա՝ թշնամիք ժամ գտեալ յարիցեն 'ի վերայ նոցա, որպէս ակներեւ տեսանէին. զի իւրաքանչիւր ոք սկսաւ ըստ հաճոյից իւրոց խօսիլ և առնել, մանաւանդ Բաղաքապետն և Ցոյնք. զի եթէ իմացեալ էր նորա թէ 'ի կողմանէ Հայոց լեալ է աքսորումն իւր, գործէր բազում չարիս և վնասս։

Ապա կարգեաց 'ի տեղի իւր փոխանորդ զԲպրապետն Դատարանի, զի ոչ էին բարձեալ 'ի նմանէ զպատիւ Դատաւորութեան, զի էր նա այր յիմար և դիւաբաղխ. սաստ-